ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ 326

19 օգոստոսի 2022 թվականի N -Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ «ՀՐԱՆՏ ՈՍԿԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԿԱՊԱՆԻ ԹԻՎ 12 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՇԵՆՔԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՐԿԻ ՏԱՐԱԾՔԻ ՄԻ ՄԱՍԸ ՍԵՂՄ ԺԱՄԿԵՏՈՒՄ ՃԱՇԱՐԱՆԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, 13-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով և հիմք ընդունելով «Հրանտ Ոսկանյանի անվան Կապանի թիվ 12 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Ա. Մարտիրոսյանի 2022 թվականի օգոստոսի 4-ի դիմումը՝

որոշում եմ

1. Հանձնարարել «Հրանտ Ոսկանյանի անվան Կապանի թիվ 12 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Ա. Մարտիրոսյանին՝ սեղմ ժամկետում կազմակերպել նշված դպրոցի շենքի առաջին հարկը ճաշարանի վերակառուցելու աշխատանքների իրականացումը՝ հաշվի առնելով խնդրի կարևորությունը և անհետաձգելիությունը՝ կապված նոր ուսումնական տարվա մեկնարկի հետ:

2. Հանձնարարել ՀՀ Սյունիքի մարզպետի աշխատակազմի Ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչությանը՝ կատարել սույն որոշումից բխող Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված գործառույթները և արդյունքների վերաբերյալ ներկայացնել տեղեկատվություն:

19.08.2022

X

ՌՈԲԵՐՏ ՂՈՒԿԱՍՅԱՆ

Подписано: GHUKASYAN ROBERT 3312600290

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ **Ռ. ՂՈՒԿԱՍՅԱՆ**

2022թ. օգոստոսի 19
ք. Կապան